Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| Կազմակերպության տվյալներ<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ. հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| Հետազոտության թեմա/վերնագիր<br>• Հետազոտության թեմա | Ուսուցման տեխնոլոգիաները 6-րդ դասարանում անգլերեն լեզվի կարդալու կարողունակության զարգացման համար |
| | |
| Ուսուցչի տվյալներ<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Տաթևիկ Օհանյան Բորիկի<br>Անգլերենի ուսուցչուհի<br>+374 94 61 73 62<br>tatevikohanyan@mail.ru<br>Անգլերեն լեզու<br>4-11-րդ դասարաններ |
| Ուսումնական հաստատության տվյալներ<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Կոտայքի մարզ, Բյուրեղավանի հիմնական դպրոց ՊՈԱԿ, ք. Բյուրեղավան, Ս. Վարդանյան 2<br>0222-65-440<br>Byureghavan2@schools.am |

Բովանդակություն

Ներածություն------------------------------------------------------------------------------------------------3 3

1.Ուսումնասիրություններ----------------------------------------------------------------------5

2.Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առավելությունները-------------------6

3.Տեխնոլոգիաները լեզվի դասավանդման մեջ---------------------------------------------7

4.Ուսումնական տեխնոլոգիաների գործիքների դասակարգումը------------------------9

**5.E-communication tools**- հաղորդակցմանը խթանող էլեկտրոնային գործիքներ----- 12

**6.Reading/writing e-tools**- կարդալու/գրելու խթանող գործիքներ էլեկտրոնային գործիքները------------------------------------------------------------------------------13

**7.Listening/speaking**-լսելու/խոսելու-խթանող էլեկտրոնային գործիքներ--------------15

**8.E-assessment tools** էլեկտրոնային գնահատման գործիքներ----------------------------------- 16 4

Եզրակացություններ, առաջարկություններ--------------------------------------------------22

5

Օգտագործված գրականության ցանկ--------------------------------------------------23 6

7

Ներածություն

Վերջին տարիների տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ քայլերով նվաճում են մեր կյանքի բոլոր բնագավառները: Այն ինչ ժամանակին անհավանական էր թվում, հիմա արդիական է և այն մարդու ամենօրյա գործունեության մեջ անբաժան մաս է կազմում: Մարդու օգնությամբ տեղեկատվական տեխնոլոգիանները գալիս են փոխելու հենց մարդու կյանքը և գործունեության տեսակները:

Իհարկե ՏՏ—երը ունեն թե դրական, թե բացասական կողմեր: Սակայն տեղեկատվական տեղնոլոգիաների պատշաճ կիրառությունը կարող է ավելի արդյունավետ դարձնել մեր առօրյան:

Վերջին տարիններին աշխարհում մոլեգնող բոլորիս հայտնի հիվանդությունը պարճառ դարձավ տեղեկատվական տեխնոլոգյաների կրթության ոլորտում լայն կիրառմանը: Իհարկե գտնվեցին մարդիկ, որ դա համարեցին անհեթեթություն , ապագա սերունդների «բթացման» գործիք: Դա ունի իր պատճառները. ինչպես կարող է մի քանի տարիների փորձ ունեցող մասնագետը աշխատել այնպիսի գործիքներով, որոնց մասին առաջին անգամ է լսում կամ տեսնում: Բազմաթիվ նման կարծիք ունեցող մասնագետներ գերադասում են աշխատել կավիճով, քան սովորել և կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք ավելի արդիական են և հասու այս դարի աշակերտների համար:

Դեռ վաղ անցյալում օտար լեզուների արդյունավետ դասավանդումը բոլորը կապում էին լինգաֆոնային դասարանների առկայության հետ, եթե կար դպրոցում նման դասարան, ապա լեզվի դասավանդում ճիշտ ճանապարհին էր: Սակայն այսօր, ես, լինելով օտար լեզվի մասնագետ, անհնար եմ համարում լեզվի արդյունավետ դասավանդումը առանց աուդիո , վիդեո կամ տեսաաահիկաշարերի օգնության: Այն դասարանում, որտեղ կա Smart գրատախտակ, և դրա օգնությամբ ուսուցիչը ներկայացնում է նոր թեման, կամ ամփոփում է անցածը , ավելի բարձր արդյունքներ է գրանցում քան, սովորական դասարանում:

Անգլերենի դասավանդման ժամանակ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը լայնորեն հասկացվում է որպես մեթոդների, գործիքների, նյութերի, սարքերի, համակարգերի և ռազմավարությունների նորարարական կիրառություն, որոնք անմիջականորեն առնչվում են անգլերեն լեզվի ուսուցմանը և հանգեցնում են ցանկալի նպատակների իրականացմանը:

Այսպիսով, թեև տեխնոլոգիան այժմ ընդհանուր առմամբ ընդունված է որպես կարևոր կրթական և օժանդակ գործիք ուսուցման և ուսուցման մի շարք համատեքստերում, դա հատկապես վերաբերում է անգլերեն լեզվի ուսուցմանը, քանի որ այն մի շարք պոտենցիալ հնարավորություններ է ընձեռում բարձրացնելու և դասի բովանդակությունը, և մատուցումը: Սա հիմնականում հնարավորություն է տալիս աշակերտին և/կամ ուսուցչին ժամանակ առ ժամանակ վերանայել խնդրահարույց բովանդակությունը, մինչև այն լիովին ընկալվի և յուրացվի: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հայեցակարգին ծանոթությունը ոչ միայն սահմանափակվում է ժամանակակից սարքերի կիրառմամբ, այլ ավելի շուտ հասնում է ուսուցման նորարարական համակարգերի և մեթոդների ներդրմանը, որոնք նպաստում են

ուսուցման ավելի արագ և համապարփակ առաջընթացին։ Համաձայն գերակշռող մանկավարժական տեսությունների՝ տեխնոլոգիական ուսուցման ներուժն օգտագործելով՝ ուսանողներն ավելի լավ են կարողանում ձեռք բերել և կատարելագործել իրենց լեզվական գիտելիքներն ու հմտությունները։

Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը անգլերենի ուսուցման մեջ դարձել է անփոխարինելի։

Այն քննարկում է տարբեր մոտեցումներ և մեթոդներ, որոնք կարող են օգնել անգլերեն սովորող աշակերտներին բարելավել իրենց ուսուցման հմտությունները տեխնոլոգիաների միջոցով։ Այդ մեթոդների թվում են անգլերենի ուսուցման առցանց կայքերը, լեզվի ուսուցման համակարգչային ծրագրերը, շնորհանդեսների ծրագրային ապահովումը, էլեկտրոնային բառարաններ, արդեն իսկ ուսուցչի կողմից պատրաստած հարցումները, որոնք ունեն ակնթարթային հետադարձ կապ և աշակերտը կարող է տեսնել իր սխալները։

## 1.ՈՒսումնասիրություններ

Warsower –ը տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցման մեջ ինտեգրելու երկու մոտեցում է առաջարկում։

- Ծանաչողական մոտեցում՝ հնարավորություն է տալիս աշակերտներին զգալիորեն ընդլայնել իրենց փորձառությունը լեզվի ուսուցման բնագավառում և ամրապնդել իրենց գիտելիքները։
- Սոցիալական մոտեցում՝ հնարավորություն է տալիս աշակերտներին իրական սոցիալական փոխազդեցություններում կիրառել իրական կյանքում ձեռք բերված հմտություններ։

Bordbar-ը ուսումնասիրել է օտար լեզու դասավանդող ուսուցիչների տեխնոլոգիաների դասավանդման պրոցեսում կիրառելու պատճառները և գործոնները։ Հետագայում ուսումնասիրվել է նաև ուսուցիչների վերաբերմունքը տեխնոլոգիաների նկատմամբ ինչպես նաև այն ուղիները, որոնք նրանց օգնել են սովորել տեխնոլոգիաների կիրառման համար։ Արդյունքները ցույց են տվել, որ գրեթե բոլոր ուսուցիչները դրական են վերաբերվում դասարանում համակարգիչների օգտագործմանը։ Արդյունքները նաև կարևորեցին ուսուցիչների տեխնոլոգիաների նկատմամբ շարունակական ընկալմանը, փորձի ձեռքբերումը և նոր հմտությունների կիրրառմանը տանող գործընթացը։

Շյամլին վերլուծել է մուլտիմեդիա տեխնոլոգիաների օգտագործումը օտար լեզուների ուսուցման մեջ : Հետազոտությունը պարզել է, որ նման տեխնոլոգիանները բարձրացնում են սովորողների մոտիվացիան և ուշադրությունը ուսուցման նկատմամբ, որը նրանց հնարավորություն է տալիս անկաշկանդ շփվել իրար հետ:

Հետազոտության արդյունքները հաստատում են անգլերենի դասավանդման ավանդական մեթոդների ապացուցված անարդյունավետությունը և հաստատում են, որ սովորողներն ավելի մեծ ոգևորություն են ցուցաբերում անգլերեն յուրացման համար ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ժամանակ:[6]

## 2.Ուսումնական տեխնոլոգիաների կիրառման առավելությունները

Ուսումնական տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման մեջ, տալիս է աշակերտին ոչ միայն սովորելու մոտիվացիա, այլ նաև հնարավորություն անկաշկանդ շփման և ինքն իր գիտելիքների ամրապնդման հնարավորություն: Տեխնոլոգիան նաև ապահովում է ակնթարթային հետադարձ կապ տարբեր առաջադրանքների և վարժությունների կատարման համար: Տեխնոլոգիաները կարող են նաև լրացում հանդիսանալ դասի համար և խնայեն բավականաչափ ժամանակ: Եվ վերջապես տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս օգտագործել արդիական նյութեր, նկարներ, տեղեկատվական աղբյուրներ՝ պարզապես օգտագործելով ինտերնետ կապ:

Երբ հաշվի են առնվում դասարանում տեխնոլոգիաների ներդրման առավելությունները, ուսուցիչների համար օգուտները հաճախ անտեսվում են: Իրականում տեխնոլոգիաները ուսուցչի համար շատ հզոր գործիք են հանդիսանում: Ուսուցիչը ոչ միայն կարողանում է խնայել բավականաչափ ժամանակ, այլ արդյունավետ կարողանում է ներկայացնել և հասանելի դարձնել աշակերտի համար ամենաբարդ թեմաները:

Ակնհայտ է, որ տեխնոլոգիաների ժամանակը ոչ միայն եկել է, այլև կմնա մեր առօրյայում ընդմիշտ: Ապագայում առավել տարրական խնդիրները կպահանջեն ավելի բարձր մակարդակի տեխնոլոգիական հմտություններ: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարևոր է համոզվել, որ մեր աշակերտները լավ են տիրապետում տեխնոլոգիական գործիքներին, հմտություններին և լեզվին:

Լավագույն ճանապարհը հասկանալու համար, որ մեր աշակերտները կկարողանան գոյատևել արագ զարգացող տեղեկատվական աշխարհում, հարկավոր է շարունակական դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասարաններում: Դարձնել դրանք ամենօրյա դասի անբաժան մասը:[5]

## 3. Տեխնոլոգիաները լեզվի դասավանդման մեջ

Տեխնելոլոգիաների կիրառությունը դասավանդման մեջ նոր չեն: Տարիներ շարունակ լեզվի դասավանդման բնագավառում կիրառվել են տարբեր ձայնասկավառակներ, տեսագրություններ և հատուկ նախատեսված դասարաններ, դրանք մինչ օրս էլ կիրառվում են:

Համակարգչի օգնությամբ ստեղծված նյութերը կոչվում են CALL (Computer Assisted Language Learning), որը իհայտ է եկել դեռ 1980 ական թվականներին: CALL –ի նպատակն էր , որ աշակերտները տեսնելով էկրանի վրա հայտնվող պատկերները, արձագանքեն, օրինակ լրացնեն տեքստում բաց թողնված բառերը, տառերը կամ ճիշտ ընտրեն հարցի բազմակի պատասխաններից ճիշտը: Համակարգիչը հետադարձ կապի միջոցով, կամ որոշակի ցուցումներով ցույց է տալիս թե որտեղ է սխալվել աշակերտը: Դրանք նախօրոք ծրագրավորած CD-Rom ծրագրերն էին:

Ժամանակի ընթացքում տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների (ICT) արագ զարգացման արդյունքում CALL-ը մղվեց երկրորդ պլան, քանի որ ICT առաջարկում էր լեզվի արդյունավետ զարգացում, որին հասնելու համար առաջարկում էր կիրառել համացանց և տեղեկատվական կայքեր: TELI (Technology Enhanced Language Learnin) տերմինը, որը ի հայտ է եկել 1990-ական թվականներից սկսած:

Չնայած ՏՀՏ-ի օգտագործումը օտար լեզուների դասավանդման մեջ ուսուցիչների կողմից դեռևս լայն տարածում չի ստացել, տեխնոլոգիաների օգտագործումը դասարանում դառնում է ավելի ու ավելի կարևոր է, և առաջիկա տարիներին դա կդառնա անգլերենի դասավանդման (ELT-ի) պրակտիկայի անբաժան մասը: Դրա համար բազմաթիվ պատճառներ կան:

- Ինտերնետ հասանելիություն – ժամանակի ընթացքում ինտերնետ հասանելիությունը հնարավոր է դառնում ամեն տեղ, որ սովորողին հնարավորություն կտա սովորել ցանկացած վայրում:
- Կրտսեր դպրոցականները մեծանում են տեղեկատվական տեխնոլոգիաների հետ համատեղ, և այն դարձել է իրենց կյանքի անբաժանելի մասը: Տեխնոլոգիաները միջոց են տարատեսակ ինֆորմացիաները բերել դասարան: Սա հնարավորություն կտա աշակերտներին հանդես գալ որպես ուսուցիչներ:
- Անգլերենը, համարվելով միջազգային լեզու նաև տեղեկատվական տեղնոլոգիաների հիմնական լեզուն է:

- Տեխնոլոգիաները, հատկապես ինտերնետ հասանելիությունը, մեզ հնարավորություն են տալիս օգտագործել բազմաթիվ աութենտիկ նյութեր և հասանելիություն անգլերենի դասավանդման համար արդեն պատրաստի նյութերին:
- Ինտերնետը հնարավորություն է տալիս աշխարհագրական տարբեր դիրքերում գտնվող ուսանողներին շփվել և համագործակցել:
- Տեխնոլոգիաները առաջարկում նոր մեթոդներ և մոտեցումներ:
- Տեխնոլոգիաները աստիճանաբար դառնում են ավելի շարժուն և հնարավորություն են տալիս սովորել ոչ միայն դասարանում , այլ նաև ցանկացած վայրում:
- Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս աշակերտին փորձարկել և զարգացնել լեզվի իմացության չորս հիմնական հմտությունները (reading, speaking, listening, writing):

Այս ամենին հասնելու և արդյունավետ կիրառելու համար , առաջ են գալիս մի շարք խնդիրներ: Ուսուցիչները խուսափում են տեխնոլոգիաների կիրառությունից՝ բավարար հմտություններ չունենալու պատճառով: Հետևաբար ուսուցչի ուսումնական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացման գործընթացը պետք է շարունակական լինի:[4]

## 4.Ուսուցման տեխնոլոգիաների գործիքների դասակարգումը

Ուսուցման տեխնոլոգիաների գործիքները օտար լեզուների դասավանդման համար կարելի է բաժանել հետևյալ խմբերի:




E-creation tools- էլեկտրոնային պաշարների ստեղծման գործիքներ

Այս գործիքները թույլ են տալիս անգլերեն սովորողներին ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Նմանատիպ գործիքները աշակերտին տանում են ինքնաբերաբար ինքնակրթման, քանի որ նման գործիքներով աշխատելու ոչ միայն համակարգչային հմտություններ են հարկավոր, այլ կարևոր է նաև լեզվական հմտությունները: Նման գործիքների օրինակներ են վեբ հրապարակումը, ճնորհանդեսների ծրագրային ապահովումը, վարժությունների ստեղծման գործիքները, տեսախցիկը, ֆիլմերի և աուդիո ստեղծող գործիքները:

**Web** կայքերի օգտագործում դասարանում: Վեբ-կայքերի օգտագործումը դասասենյակում տեխնոլոգիաների հետ ծանոթանալու ամենահեշտ և ամենաքիչ սթրեսային ձևերից մեկն է: Ինտերնետում առկա է ռեսուրսների մեծ և անընդհատ ընդլայնվող հավաքածու տարբեր մակարդակների համար, որոնք ընդգրկում են բազմաթիվ թեմաներ: Ինտերնետը բովանդակության աղբյուր է, որը կարող է օգտագործվել որպես պատուհան, ձեր դասի սահմաններից դուրս ավելի լայն աշխարհ մուտք գործելու համար, և, իհարկե, աութենտիկ նյութերի հեշտ և հասանելի աղբյուր է:

***PowerPoint***-ը ծրագրային ապահովում է, որը կարող է օգտագործվել համակարգչի վրա ներբեռնվելուց հետո, դասարանում օգտագործելու ուսումնական ձեռնարկ ստեղծելու համար: Powerpoint թույլ է տալիս օգտագործողին ստեղծել ներկայացում, որը կնպաստի դասի ուսումնասիրվող բովանդակության քննարկմանը: Երբ անգլերենը օգտագործում է Powerpoint-ը ցուցադրություն ստեղծելու համար, այն թույլ է տալիս աշակերտին բացատրել տրված թեման իրեն լսողներին ավելի անկաշկանդ, և քանի որ այն ներառում է գրավոր բովանդակություն, այն խրախուսում է աշակերտին քերականորեն ճիշտ և մանրակրկիտ լինել իր բացատրություններում:

Powerpoint-ով ուսուցիչը կարող է ստեղծել նաև ինտերակտիվ դասեր, որոնք ներգրավում են դասարանի անգամ ամենաթույլ աշակերտների: Այդ ինտերակտիվ ցուցադրությունները հիմնականում նման են լինում հայտնի հեռուստահաղորդումներին:

Նմանատիպ ինտերակտիվ ցուցադրություններից է «Ո՞վ է ուզում դառնալ միլլիոնատեր»:




Խաղում տրվում է հարցեր նախատեսված երկու թիմերի համար և հնարավոր 4 պատասխաններ: Խաղը հնարավորինս նմանեցված է հեռուստախաղին և անգամ ճիշտ պատասխանի դեպքում աշակերտը հավաքում է միավորներ: Խաղը նաև ունի 50/50, զանգ ընկերոջը և դահլիճի օգնություն հնարավորությունը: Սա նպաստում է դասին բոլոր աշակերտների ներգրավմանը:







Կան բազմաթիվ նմանատիպ խաղեր, որոնք կարելի է ներբեռնել տարբեր կայքերից հարկավոր է համապատասխանեցնել տվյալ օրվա թեմային և ունենալ շատ արդյունավետ դաս:

PowerPoint ծրագրին կարող է փոխարինել նաև Sway[1] ծրագիրը, որը օգտագործելու համար հարկավոր է ունենալ Microsoft Office 365 ծրագրի հաշիվ (ԿՏԱԿ-ը տվել է նման հնարավորություն բոլոր պետական հաստատություններին ունենալ Microsoft Office 365 հաշիվ): Այս ծրագրի օգնությամբ կարելի է կատարել գրեթե նույն գործողությունները ինչը PowerPoint ծրագրում:

Էլեկտրոնային վարժությունների ստեղծման կայքեր. նման կայքերը հնարավորություն են տալս ուսուցչին ստեղծել հարցումներ, վարժությունները և ներգրավել աշակերտներին դասընթացի մեջ: Հաճախ ավելի արդյունավետ է երբ աշակերտն ինքն է ստեղծում նմանատիպ պաշարներ, դա նրան հնարավորություն է տալիս փորձել ավելի ճիշտ կիրառել իր գիտելիքները և ուղղել թերությունները: Hot potatoes –ը հրաշալի ծրագիր է, որը հնարավորություն է տալիս ստեղծել տարատեսակ առաջադրանքներ՝ խաչբառեր,

1 https://youtu.be/DU7EUEd8vss

բազմակի պատասխանների հնարավորությամբ հարցումներ, համադրություններ  և այլն: Սա օգնում է աշակերտին լեզուն ավելի շոշափելի դարձնել: Hot potatoes ծրագրով կարելի է նաև հետաքրքիր ուսումնական ձեռնարկներ ստեղծել:[4]

## 5.E-communication tools- հաղորդակցմանը խթանող էլեկտրոնային գործիքներ

Ծրագրերը, որոնք նպաստում է աշակերտների  և ուսուցիչների շփմանը, կարելի է բաժանել երկու տեսակի գործիքների: Նախ, կան ծրագրային ապահովման տեսակները, որոնք թույլ են տալիս իրական ժամանակում հաղորդակցվել (այսինքն համաժամանակյա), ինչպիսիք են հեռախոսային խոսակցությունները, ձայնային կոնֆերանսները և ակնթարթային հաղորդագրությունները: Երկրորդ տեսակի ծրագրային ապահովման ներառում է նրանք, որոնք իրականացվում են անհամաժամ (այսինքն ասինխրոն), ինչպես, օրինակ, էլեկտրոնային փոստով, տեքստային հաղորդագրությունների միջոցով բջջային հեռախոսների, և հաղորդակցման ձևերը:

Դասից դուրս էլեկտրոնային հասցեների օգտագործում




Սովորողների հետ էլեկտրոնային հասցեների կիրառման բազմաթիվ ձևեր կան: Ամենապարզ ձևերից են էլեկտրոնային հասցեյով աշակերտներին տնային հանձնարարություններ ուղարկելը: Էլեկտրոնային հասցեյով կարելի է նաև իրականացնել մեկ կիսամյակ տևող նախագիծ միևնույն տարիքի տարբեր դպրոցներում սովորող աշակերտների մեջ: Օրինակ աշակերտ 1 ին ուղերկել կարճ տեքստ, որը տվյալ աշակերտը կշարունակի

, այնուհետև կուղարկի ապակերտ 2 ին , որը իր հերթին կցարունակի տեքստը և այդպես մի քանի աշակերտ տվյալ առաջադրանքը կկատարի և կուղարկի ուսուցչին: (Microsoft office 365 կարող է հնարավորություն տալ մի քանի աշակերտի միաժամանակ աշխատել միևնույն փաստաթղթի վրա):[1]

## 6.Reading/writing e-tools- կարդալու և գրելու խթանող էլեկտրոնային գործիքները

ՏՀՏ որոշ գործիքներ կարող են հեշտացնել և բարձրացնել գրելու և կարդալու հմտությունները սովորեցնելու և սովորելու արդյունավետությունը: Նման գործիքների օրինակներ են առցանց հայտարարությունների տախտակները, առցանց ամսագրերը, բլոգները, վիքի և էլեկտրոնային գրքերը:

Բլոգերները, վիքիները, գրատախտակները և տեղեկամատյանները կարող են օգտագործվել է թվային նյութեր կամ պորտֆոլիո ստեղծելու համար: Սա այն տիրույթն է, որտեղ աշակերտները աշխատում են համատեղ նախագծերի վրա: Դրանք կարող են օգտագործվել նաև մասնագիտական զարգացման կամ ուսանողների աշխատանքի արդյունքների ամփոփման համար: Օրինակներ նման գործիքների blogger, Wikispaces և Penzu: Դրանք կարող էք մուտք գործել, սեղմելով ստորև նշված հղումները:

- https://webwhiteboard.com/
- https://penzu.com
- https://www.wikispaces.com/content/classroom
- https://www.blogger.com/

Նմանատիպ գործիքներ են էլեկտրոնային գրքերը, որոնք ունեն բազմաթիվ ֆունկցիոնալ հնարավորություններ: Աշակերտները կարող են օգտագործել դրանք զարգացնել իրենց ընթերցանության հմտությունները: Օրինակ, էլեկտրոնային գրքերին ավելացվել է աուդիո, ինտերակտիվ առաջադրանքներ և ներկառուցված բառարաններ: Այս գործիքի մեկ այլ առավելությունն այն է, որ աշակերտները կարող են օգտագործել էլեկտրոնային գրքերը բազմաթիվ սարքերի օգնությամբ, ինչպիսիք են պլանշետները, բջջային հեռախոսները և նոթբուքները: Նմանատիպ կայքերից են՝

https://www.getepic.com/app?section=read-to-me

https://www.vooks.com/

https://kidsread2kids.com/classic-novels

Առավել ժամանակակից և գրավիչ են բլոգերի կառավարումը: Բլոգի ամենատարածված տեսակը կատարվում է մեկ անձի կողմից, ով պարբերաբար հրապարակում է մեկնաբանություններ, մտքեր, վերլուծություններ, առօրյա կյանքի իրադարձություններ, հետաքրքիր հղումներ, կատակներ կամ վեբ էջի բովանդակության որևէ այլ ձևեր: Բլոգները կարող են բաղկացած լինել միայն գրավոր տեքստից, կամ դրանք կարող են ներառել պատկերներ կամ լուսանկարներ–լուսանկարներ կամ նույնիսկ աուդիո և վիդեո:

Բլոգ վարելու համար հարկավոր է, որ աշակերտը այլ առարկայից արդեն իսկ տեղեկացված լինի թե ինչպես է պետք աշխատել: Բլոգ վարելը հնարավորություն է տալիս աշակերտին կատարելագործել գրելու հմտությունները: Բլոգերի տեսակները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝ ուսուցչի , աշակերտի և դասարանի:[3]

Ահա աշակերտի հետ բլոգ վարելու մի օրինակ:

| Tutor blog | Student blog | Class blog |
|---|---|---|
| • Set homework. | • Personal and family information (including photos). | • Reactions to a film, article, class topic, current affairs. |
| • Provide a summary of class work. | • Extra writing practice on class topics. | • Things learners like/don't like doing in class. |
| • Provide links to extra reading/listening material. | • Regular comments on current affairs. | • A class project on any topic. |
| • Question and answer (e.g. about grammar, class work). | • Research and present information on a topic (e.g. an English-speaking country). | |
| • Exam/Study tips. | • A photoblog on learner's country, last holiday, town. | |

## 7.Listening/speaking-Լսելու/խոսելու-խթանող էլեկտրոնային գործիքներ

Լսելու ունակությունը կարող են զարգանալ այնպիսի ՏՀՏ գործիքների միջոցով, ինչպիսիք են:

- Վիդեո և աուդիո ֆայլեր;

https://elllo.org/index.htm

- Ձայնագրություններ (աուդիոֆայլեր)

https://learnenglish.britishcouncil.org/general-english/audio-zone

- Աուդիո վիդեո փոխանակման գրադարաններ, ինչպիսիք են YouTube-ում:

https://www.youtube.com/c/LearnEnglishwithJessica

https://www.youtube.com/c/BostonEnglishCentre

https://www.youtube.com/c/PolandNews

https://www.youtube.com/c/LearnEasyEnglish

Անգլերենի համար լսելու և խոսելու կարողությունները զարգացնելու համար նյութերը բազմազան են: Արդյունավետ է լինում դասարանում դիտել որևէ տեսանյութ կամ լսել որևէ ձայնագրություն: Բառապաշարի ուսուցումը ավելի արդյունավետ և հետաքրքիր է դառնում աշակերտի համար և բառերի արտասանության հետ մեկտեղ աշակերտը տեսնում է պատկերներ: Օրինակ սպորտի անունները սովորելու համար նման տեսանյութը բավական արդյունավետ է:

https://youtu.be/lRxawhuLQKM




Դասարանում ավելի բարձր դասարանի աշակերտների համար հետաքրքիր է նաև տարատեսակ կարճ տեսանյութեր դիտել այնուհետև կատարել կարճ հարցում, որը ստուգում է թե աշակերտը ինչքանով է հասկացել տվյալ տեսանյութում առկա թեման, կամ բովանդակությունը: Նման հնարավորություն է տալիս հետևյալ կայքը, որտեղ տեսանյութը դիտելուց հետո ակտիվանում է հարցում:

https://ed.ted.com/

## 8.E-assessment tools էլեկտրոնային գնահատման գործիքներ

Էլեկտրոնային գնահատման գործիքները ուսուցչին հնարավորություն են տալիս արագ ստուգել աշակերտների տվյալ թեմային առնչվող գիտելիքները: Նման գործիքները աշակերտին դրդում են ինքնուրույն աշխատելուն:

Էլեկտրոնային գնահատման գործիքները 4 են, որոնցից միայն երկուսն են պահանջում տեխնոլոգիաների կիրառությունն ունեն իրեն համար նախատեսված էլեկտրոնային գործիքները:

- Diagnostic փորձնական
- Formative ձևավորող/զարգացող
- Interim միջանկյալ
- Summative վերջնական

## Diagnostic փորձնական

Փորձնական գնահատումը, որը հաճախ կոչվում է նախնական գնահատում, նախատեսված ուսուցման մեկնարկից առաջ աշակերտի գիտելիքների ստուգման համար: Այս գնահատականները կարող են նաև բացահայտել ընթացքում ուսուցման սխալ վարքագիծը, սխալ պատկերացումները, որոնք կարող է ունենալ աշակերտը, և հմտությունները, որոնք պետք է զարգացնել: Դասընթացի վերջում արդյունքները կարելի է համեմատել վերջնական գնահատականների հետ և տեսնել, թե որքան են զարգացել աշակերտի գիտելիքները:

## Formative ձևավորող/զարգացող

Ձևավորող գնահատումը անցկացվում է դասի ընթացքում, որը հնարավորություն է տալիս աշակերտին դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքները ավելի ամրապնդել:

Նման գործիքներից են՝




- Edpuzzle.
- Edulastic.
- Flipgrid.
- Google Classroom Question Tool.
- Go Formative.
- Kahoot!

| | |
|---|---|
| Նպատակը եւ հետազոտական հարցը | Ուսումնասիրության նպատակն է անգլերեն լեզվի հաղորդակցումը դպրոցում: |

| | |
|---|---|
| | Հարց: Արդյո՞ք ուսուցման տեխնոլոգիաները կարող են նպաստել 6-րդ դասարանում անգլերեն լեզվի կարդալու կարողունակությանը: |
| | |
| Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը | լեզվական գրագիտություն |
| | |
| Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/ | 6-րդ դասարան<br>Տղա՝ 10<br>Աղջիկ՝ 12 |
| | |
| Օգտագործված հետազոտական մերոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով և այլն) | որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով |
| | |
| Հետազոտության իրականացման ժամանակահատվածը | Սեպտեմբեր 2023 թ. |
| | |

Հիմնական բովանդակություն

| | |
|---|---|
| Գրականության ակնարկ<br>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: | Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցչին արագ նկատել թերացումները և մշակել նոր ուղիներ այդ աշակերտին ներգրավելու համար: Տեխնոլոգիաները նաև թույլ են տալիս աշակերտին աշխատել իր ընդունակությունների սահմաններում:[3, 25-27] |

| | |
|---|---|
| Պարտադիր է կատարել հղում աղբյուրին | |
| | |
| Հետազոտության ընթացքը | ***Plan of the lesson***<br>***Subject*** *--------- English*<br>***The Duration of the lesson 45 m.***<br>***Grade*** *leval*<br>*-VI-------------------------------*<br>*-*<br>***The Topic of the lesson*** *-- Animals*<br>***The methods*** *:* Snowball, brainstorming, interactive reading guides<br>***The Objective***<br>***a.Academic***<br>*a*. Students will develop their reading and oral speech abilities.<br>**b**. They will learn new words and expressions, new proverbs about animals-**c.** They will learn to recite poems and sing the song “Hungry Hippo” at the end of the lesson<br>**d.** They will use adjectives and verbs describing animals and make charts of how they move and what their body is covered with.<br>**e**. They will be able to use computers and play games about animals by using the website |

| | |
|---|---|
| | http://learnenglishkids.britishcouncil.org/en/<br>***b. Social***<br>***a.*** Students will gain knowledge about animals, animal life and habitat.<br>b. They will learn about their preference, what they eat, what noises they make, where do they come from, where do they live what do they look like.<br>b. They will be able to classify the animals<br>• wild or domestic<br>• According to habitat<br>• According to their covering fur/feather/skin...<br>• According to what they eat: plants, other animals, both<br>• According how they move...<br>***The Materials*** PPT about animals, pictures of a large number of animals, cards, a placard, computers with Internet access.<br>***Basic (principal) conseption***<br>Animal vocabulary- jungle, names of the most common wild and domestic animals<br>a. Verbs such as: **feed, touch, eat, stroke, walk, run, swim, fly, crawl, hop, climb**<br>b. Adjectives describing animals: slender ***slender, graceful clumsy ,awkward playful, little , ridiculous , dangerous , long –legged , peaceful , miserable , quick ...***<br>***The Steps :*** |

| | |
|---|---|
| | ***<u>Discription of the stimulation phase</u>***<br>• Greeting<br>• Demonstrate a PPT about animals which was made beforehand<br>• Do brainstorming<br>• Ask whether the pupils like animals or not (what animals do they like…,whether they can describe their pet or not …<br>• Show some pictures of animals and offer them to describe<br>• Speak about wild and domestic animals<br>• Make a flower using the letters of the expression "animal land – wonderland"<br>• Learn proverbs about animals and their Armenian versions.-such as:-<br>***<u>Semantic perception (meaning ,sense,comphension)</u>----* 10 m.**<br>Students will present a large number of animals. They will tell about their way of life how they survive, what they eat…<br>They will read and retell the text "Focus on animals" describing animals.<br>They will try to use adjectives and say how do they look. Such as: Elephant is big and fat.<br>Play a memory game: "How the animals move" |

Divide the class into 4 groups and offer to make  a chart  how the animals move.







Ask the pupils who can recite a poem? Students will recite poems and rhymes which they have learn beforehand.

Such as: “Watch”, “A Duck Family”, “My pet’’. “I love my dog”, “ Grasshopper”, “Let’s play”, “Butterfly”, “The cat”, “The three foxes”, “Five little ducks”, “Three Little Kittens, “Cats”, “Grandpa Bear’s Lullaby”...

| | |
|---|---|
| | • Then the class will watch and sing the "Hungry hippo "from www.britishcouncilorg.<br>• Suggest the class to guess some riddles which are demonstrated in the PPT.<br>• Such as: ***IT CAN FLY . IT HAS LONG WINGS. IT IS THE AMERICAN SYMBOL.***<br>and give some versions :bird, fly ,eagle, turkey .The students must guess the correct answer.<br>***Evaluation phase***<br>• Summarizing the lesson ask the students to make a "Jungle book". Use adjectives to describe the animals.---<br>• Mark the students using assessing---rubrics. Deliver smiley faces to those who were the best.<br>***Hometask:*** - Deliver the lyrics of the song "Incy wincy spider". Try to learn the song. |
| | |

## Եզրակացություններ, առաջարկություններ

Ուսուցման տեխնոլոգիաների կրառությունը օր օր զարգացում է ապրում: Այսօր աշակերտին չի հետաքրքրում գիրքն ու տետրը, նրանց գրավում է ավելի գունեղ և շարժուն աշխարհը: Ուսուցիչները հաճախ մեծա հաջողություն են համարում, երբ դասարանում կիրառում են տեխնոլոգիաներ և այն ստացվում է: Սակայն քիչ չեն այն կարծիքները, որ տեղեկատվական տեղնոլոգիաները երբեմն խաթարում են ուսուցման կամ դասավանդման խաղաղ ընթացքը: Սակայն կլինեմ այն լավատես ուսուցիչներից, որը վստահ է. դասարանում տեննոլոգիաների գրագետ կիրառումը կհանգեցնի ամենաբարձ արդյունքների:

Այսօրվա դեռահասը ծնվել և մեծանում է տաղեկատվական աշխարում, հեռախոսը, համակարգիչը նրա կյանքի անբաժան մասն են կազմում: Սակայն այդ սարքերի օգտագործումը, եթե կիրառվի ուսուցման մեջ, մենք ավելի մեծ արդյունավետություն կունենանք: Իհարկե, ոչ բոլոր աշակերտներն են ունակ տեխնոլոգիաների միջոցով ընկալել լեզուն: Ուսուցման տեխնոլոգիաների կիրառությունը պետք է հնարավորությու տան աշակերտին պատրաստ լինել հետագա կյանքին:

| | |
|---|---|
| Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին | Վերը նշված գրեթե բոլոր գործիքները հնարավոր է կիրառել բոլոր այն դպրոցներում, որտեղ կա էլեկտրոնային գրատախտակ: Սակայն կարող եմ վստահորեն ասել, որ շատ դեպքերու էլետրոնային գրատախտակի առկայությունը բավական չէ նման գործիքների կիռարման համար: Հարկավոր է և անհրաժեշտ ուսուցիչների ոչ միայն մասնագիտական հմտություններ զարգացումը, այլ նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին գրագետ կիրառման հմտությունների զարգացմանը տանող տարատեսակ դասընթացները: |
| | |
| Այլ տեղեկատվություն | |

Օգտագործված գրականության ցանկ


1. Arifah, A. (2014). *Study on the use of technology in ELT classroom: Teachers' perspective* (M.A.Thesis). Department of English and Humanities, BRAC University, Dhaka, Bangladesh.
2. Aydin, S. (2013). Teachers' perceptions about the use of computers in EFL teaching and learning: The case of Turkey. *Computer Assisted Language Learning*, 26(3), 214-233.
3. https://doi.org/10.1080/09588221.2012.654495
4. Warschauer, M. (1997). Computer-mediated collaborative learning: Theory and practice. *The Modern*
5. *Language Journal*, *81*(4), 470-481. https://doi.org/10.1111/j.1540-4781.1997.tb05514.x

6. https://games4esl.com/powerpointgames/
7. https://games4esl.com/powerpointgames/
8. https://powerpointgames.uk/
9. https://miningquiz.com/games/powerpoints/Presentation_Games_List.htm
10. https://youtu.be/DU7EUEd8vss
11. Gavin Dudeney and Nicky Hock “How to teach English with technology” Pearson Education Limited 2007

| Հաշվետվության կցված նյութեր<br><br>• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>• Նկարներ<br>• Արդյունքներ | |
|---|---|